ԹԱՄԱԴԱ.– Այ, Էսպէս, որ տեսնում ես մեզ, հենց բռնի՝ ամենքս գեղերի իշխաններ ենք: Բայց ի՞նչ անենք, որ գերի ենք մեր հարեւանների ձեռին:

ԲՈԼՈՐԸ.– Գերի՛ ենք, գերի՛ ենք,

ՆԱԶԱՐ.– Ո՞նց թէ գերի էք:

ԹԱՄԱԴԱ.– Գե՛րի ենք, Նազար ախպեր, գե՛րի ենք: Չեն ուզում իրենց աշխարհքը մեզ տան: Չի՞ լինի մեզ ազատես դրանց ձեռից: Մեզ կերան:

ՆԱԶԱՐ.– Իրենց աշխարհքը ձեզ չե՞ն տալիս: Ո՞նց թէ: Ես Նազարը լինեմ, ականջս էդպէս բան իմանա: (Ոտքը գետին խփելով) Էսպէ՞ս էք պահում իմ ժողովրդին: (Բոլորը ցնցւում են:) Դրա համա՞ր են իմ պապերը թագաւոր եղել, որ իմ ժողովուրդը զուր էսպէս նեղութեան մէջ պահէք:

ԲՈԼՈՐԸ.– (Ոտքի են կանգնում եւ փափախները հանում:)

ՆԱԶԱՐ.– Է, չասէ՞ք, ովքե՞ր են:

ԹԱՄԱԴԱ.– Եօթը հսկաներ են:

ՆԱԶԱՐ.– (Վեր թռչելով տեղից, վախեցած:) Եօթ հսկանե՞ր... բը՛, բը՛, բը՛, բը՛... (Անհանգիստ) Որտե՞ղ են:

ՁԱՅՆԵՐ.– Հեռու են:

ՆԱԶԱՐ.– (Հանգստացած) Հա՛, հեռու են, (Սրտապնդուելով) Էհ, ո՞նց են համարձակուել էդքան հեռու լինեն: Որտե՞ղ են: (Սաքոյին) Գեադա, մի տես որտեղ են՝ գնա բեր, մի հում-հում ուտեմ դրանց: Ո՞նց թէ իրենց երկիրը ձեզ չեն տալիս, էդ քանի՞ գլուխ ունեն, որ ձեզ էդպէս նեղութիւն են տալիս: Բա դրանք չե՞ն իմանում՝, որ ես հսկա փշրող եմ: Հազար հատ էն օրը փշրտեցի, ալիւր շինեցի, տվի քամուն: Էս երկու հատիկ փոշին մնաց՝ էն էլ դրի համայիլիս մէջ: (Ցոյց է տալիս համայիլը:)

ԲՈԼՈՐԸ.– (Զարմացած եւ երկիւղած) Պա՛հ...

ՏԷՐՏԷՐ.– Տուր մի հատը մեր գեղին յիշատա՛կ, օրհնեա՛լ:

ՆԱԶԱՐ.– (Բաց է անում համայիլը, մի հատիկ տալիս է Տէրտէրին) Ա՛ռ: (Միւսներին) Կացէ՛ք, ես հսկաներին էլ փոշի շինեմ, ամենքիդ մի-մի հատ կտամ յիշատակ: Դե՛, ինձնից հրաման իմ ժողովրդի քեթխուդանե-րին: Ձեր բոլոր հարեւանների երկիրը ձե՛զ: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ.– Իմացանք, Քաջ Նազար:

ՎԱՐԺԱՊԵՏ.– (Մագաղաթի նման մարդ) Հասա՛ւ մեծ ժամանակը, եկա՛ւ ազգի հերոսը:

ԹԱՄԱԴԱ.– Ձա՛ն, վարժապետ, ջա՛ն:

ՏԷՐՏԷՐ.– Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն: